

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

— Նախիջևանի արկածեալների օգտին Ազգիս Վեհ. Հայրապետի հրամանով Բագուի կոտորածի առիթով կազմած մասնաժողովը իւր մօտ հաւաքուած գումարներից 6000 ռուբլի ուղարկեց: Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը նոյն նպատակով ուղարկեց 5000 ռուբլի: Նոր Նախիջևանից առաջնորդական փոխանորդ Տ. Մուշէ վարդապետը փոխադրեց 2000 ռուբլի: Լինում են և կողմնակի նպաստներ բոլոր լրագրիչների խմբագրութեանց միջոցով:

— Թիֆլիսի հայ քահանայից գանձարանի ընդհանուր ժողովի որոշումով նոյն գանձարանի վարչութիւնը փոխադրեց Երևանի թեմակալ առաջնորդին 200 ռուբլի Նախիջևանի գժաղդ հայերի օգտին:

— Մենք ստացանք տ. Եղիսարէթ Յարութիւնեանից հինգ ո. ի նպաստ Նախիջևանցի արկածների, որ և ուղարկեցինք Երևանի թեմակալ առաջնորդին:

— Մոսկվայի լազարեան ձեմարանի մասնագիտական դասարանների խորհուրդը վճռել է:

Պետ. խորհրդ. Դանիէլ Դաբրիէլեան Քանանեանի Մրցանակի Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեան 7-րորդ յօդուածի հիմամբ յայտարարել ի գիտութիւն մասնագէտների առաջիկայ երկու նիւթը՝ երկու մրցանակի համար, իւրաքանչիւրը՝ 1000 ռուբլի:

Ա.— Հայ գաղթականութեան պատմութիւնը հանդերձ իւրաքանչիւր գաղութի պատմական տեսութեամբ՝ սկսած Հայ Արշակունիների անկումից մինչև մեր օրերը:

Բ.— Հայերի և վրացիների քաղաքական և կուլտուրական փոխադարձ յարաբերութիւնները՝ հին ժամանակներից սկսած մինչև Վրաստանի միանալը Ռուսաստանի հետ:

Հետազօտութիւնները կարող են ներկայացուել Հայերէն կամ Ռուսերէն, Ֆրանսերէն կամ Գերմաներէն:

Լաւադոյն հետազօտութիւնը յիշեալ իւրաքանչիւր նիւթի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից հազար (1000) ռուբլի մրցանակով:

Եթէ առաջին կամ երկրորդ նիւթի մասին ներկայացրած հետազօտութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակներին մէջ:

Հետազօտութիւնները պէտք է ներկայացուեն ոչ ուշ քան 1-ն Սեպտեմբերի 1907 թ.:



— Բարձր Տ. Նահապետ վարդապետ Նահապետեանը, որ 8 տարի առաջ Կովկասի նախկին կառավարչապետ իշխ. Գօլիցի-նի կարգադրութեամբ հեռացուած էր Կովկասեան սահմաններից, թոյլտուութիւն ստացաւ վերադառնալ Կովկաս, և այսօրերս ժամանելով Թիֆլիս՝ ուղևորուեցաւ Մայր Աթոռը Ս. Էջմիածին:

— Մի նոր կարգադրութեամբ վերացուած են այն օրէնքնե-րը, որոնք վերաբերում են հայ քահանաների աքսորուելուն:

— Թիֆլիսի հայ քահանաները, տեսնելով իրանց անապահով վիճակը, իրաւունք էին ստացել սրբ. առաջնորդից համազումար ժողով կազմել և իրանց նիւթական վիճակը կանոնաւորելու համար ծրագիր մշակել: Այդ ժողովն ընտրել էր իր միջից հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որի վրայ պարտք էր դըրել մշակել այդ խնդիրը: Մակայն սրբազանը չհաստատելով այդ ընտրութիւնները՝ պատուիրել էր նոր ընտրութիւն կա-տարել առաւել բազմամարդ ժողովում: Առաջին ժողովին ներկայ էին եղել 37 հոգի: Երկրորդ ժողովը կայացաւ մայիսի 20-ին, ուր 57 քահանայից ներկայ եղան 30 հոգի, և որովհե-տեւ ժողովին նախապահող քահանան յայտնեց, թէ առաջնորդի բանաւոր պատուէրով ժողովն օրինական է համարում, քանի հոգի և ներկայ լինին, ուստի և ժողովը կատարեց մասնաժո-ղովի ընտրութիւնը, 7 հոգուց բաղկացած: Գուէարկութիւնից առաջ հեռացան 2 հոգի, իսկ մասնակցում էին 28 հոգի, ընտ-րուեցան հետեւեալները՝ Գիւտ ա. ք. Աղանեանց (27 ձ.), Գրի-գոր ք.: Ծերմազանեանց (25 ձ.), Աշոտ ք. Թէրուրազեանց (24 ձ.). Գալուստ ք. Արուսեանց (20 ձ.) Արշակ ք. Մինասեանց (18 ձ.), Ստեփան ա. ք. Մամուէլեանց և Ղևոնդ ք. Մամիկոնեանց (14 ական ձ.) իսկ անձնափոխանորդ՝ Գէորգ ք. Մեհրաբեանց (15 ձ.): Յուսանք, որ ընտրուած մասնաժողովը հիմնական ծրագիր կը մշակէ քահանայից ապահովութեան խնդրի վերաբերեալ, համա-ձայն ժամանակի պահանջներին և ժողովրդի ցան-կութեան:

— Ս. Էջմիածնից մեզ հաղորդում են, որ ձեմարանի տեսուչ մեծ. պ. Կարապետ Կոստանեանը հրաժարական է ներկայացրել վեհ. Հայրապետին, որ ընդունելով հրաժարականը մայիսի 21ին շնորհել է նորան շնորհակալութեան և օրհնութեան կոնդակ իւր արդիւնաւէտ ծառայութեան համար:

— Մայիսի 27-ին ցեր. 12 ժամին արտակարգ դնացքով Բա-լաջարի ժամանեց ն. մ. Պարսից Շահը, որ ուղևորոււմ է դէպի Եւրոպա: Նորին մեծութեան ընդառաջել էին Երևանի գններալ



նահանգապետը, սենատոր Կուզմինսկին իրանց հետևորդներով, հայ, ռուս և մանմեդական հոգևորականութիւնը և այլն:

Վեհ. Հայրապետի կողմից ընդառաջել էր Շահին Բագուի գործակալ տ. Զաւէն վարդապետը, որ մի ճառով շնորհաւորեց Նորին մեծութեան գալուստը ամենայն Հայոց Վեհ. կաթողիկոսի և Հայ ժողովրդի կողմից, ջերմ շնորհակալութիւն յայտնեց նորա ողորմածութեան և մարդասիրութեան ու այն հովանաւորութեան համար, որ ունի դէպի իւր հպատակ հայերը և յոյս յայտնեց, որ Նորին Մեծութեան շնորհաբեր գալուստը կ'ովկաս խաղաղութիւն կբերէ երկրին վշտալի իրականութեան:

Այնուհետև ներկայացաւ Բագուի հայերի մի մեծ պատգամաւորութիւն, որոնցից պ. Ս. Թաղիանոսեանը նոյնպիսի բարեմաղթութիւններով ողջունեց Իրանի պետի ժամանումը մեր կողմերը:

Շահը մեծ մարդասիրութեամբ շնորհակալութիւն յայտնեց հայութեան ներկայացուցիչներին, ասելով, թէ ինքը միշտ սիրել է իւր հաւատարիմ հայ ժողովուրդը և երբէք խտրութիւն չէ արել նոցա և իւր հպատակ մանմեդականների մէջ:

Ապա Հ. Զաւէնն ու պ. Թաղիանոսեանցը հրաւիրուել են վագօն սաղրագամի մօտ, որ շնորհակալութիւն յայտնելով այդպիսի ընդունելութեան համար, յայտնել է, թէ Շահը խիստ վշտացած է Բագուի, Երևանի և Նախիջևանի արկածներով և խնդրել է հայ հոգևորականութեան և ժողովրդին իւր բոլոր ազդեցութիւնը չխնայել այդ եղբայրասպան կոտորածին վերջ տալու համար:

Ց տարեկան մի հայ օրիորդ՝ Լիւսի Իւզբաշեանը Շահի փոքրիկ որդուն մատուցել է ծաղիկներ ի մի շքեղ փունջ:

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

27 ապրիլ 1905 Սիսիսա

Լուսայի տարւոյս № 2-ում Դանիէլ կաթողիկոսի ժամանակագրութեան մէջ «մօղիւղ» (թուղթ ԼԲ. եր. 95. Դիւան Ե.) բառը երբէք մազեղ չէ, ինչպէս որ բացատրուած էր այնտեղ, այլ մզեղն է, և դա Արարատեան Մասեացոտն գաւառի գործածական բառերից մէկն է, որ նշանակում է ծառերի, բոյսերի, արմատների ծայրի մասը. «որօրինակ ճառի մզերը չկտրես», «ցորենի մզերը չորացել են». «և միևնոյն ժամանակ յոյժ անար-